

Արյունահեղ կռիվները, ինչպես գրում է Մինաս վարդապետը, տեղի էին ունենում համարյա ամեն օր¹: Ուշագրավ է գեներալ Դուգորուկովի 1727թ. մայիսի 11-ին իր կառավարությանը հայտնած այն զարմանքը, թե ինչպես են հայերը դիմանում ստեղծված դրությանը. «Միայն աստված էր պահպանում հայերին, թե չէ՝ մարդկային խելքից բարձր է հասկանալ, թե դեռ ինչպես են նրանք պահվում այդքան զորեղ թշնամու առաջ»²:

Ազատագրական մաքառումների ամենաթեժ պահին՝ 1728թ., վախճանվեց Եսայի Հասան-Ջալալյանը:

Չնայած այդ մեծ կորստին՝ Գանձասարի կաթողիկոսական աթոռը մինչև Գյուլիստանի պայմանագրի կնքումը, զինված պայքարից մինչև դիվանագիտական փնտրտուքների ոլորտը, շարունակում էր մնալ հայոց արևելից նահանգների ազատագրական պայքարի դրոշակակիրը:

Резюме

Освободительная борьба армянского народа в конце 17-го - начале 18-го века вступила в новую фазу. Появились идеологи этого движения, выступившие с определенными программами. В их ряду особенно заметную роль играл достойный представитель Арцахского рода Асан-Джалалянов, Есаи. С момента избрания католикосом (1703 г) он стал одним из преданных борцов освободительного движения и основателем новой государственности.

Summary

The struggle for the independence of the Armenians in the late 17th and early 18th century entered a new phase. Some ideologists of this movement appeared, with their certain programs. Among them a particularly significant role was played by a worthy representative of the Artsakhian genus Hasan Jalalyan, Yesai. When elected as a Catholicos (1703), he became one of the faithful fighters of the liberation movement and the founder of the modern statehood.

ՂԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԱՐՑԱԽԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Վլադիմիր Հովսեփյան

ԼՂՀ Վերաքննիչ դատարանի նախագահ

¹ Դ.Յոս, նշվ. աշխ., էջ 459:

² Լեո, նշվ. աշխ., էջ 174:

Չնայած թուրքական և մոնղոլական դժնդակ դարերը, Լենկ Թեմուրի և թուրքմենական վաչկատուն ցեղերի ավերիչ արշավանքները կարողացան ոչնչացնել Բագրատունյաց և Կիլիկիայի հայոց թագավորությունները, սակայն պատմական Հայաստանի մի շարք հայաշատ վայրերում, հատկապես՝ Սյունիքում և Արցախում, երկրի բնիկ տերերն ընդհուպ մինչև ռուսական տիրապետության հաստատումն Անդրկովկասում կարողացան զենքի ուժով պաշտպանել իրենց ազգային ինքնիշխանությունը:

Եվ եթե 18-րդ դարի սկզբներին Սյունիքի և Արցախի մելիքությունները հասան փաստական անկախության, այդ երկրամասերը գերծ պահելով մահմեդական ուժացումից ու սերունդներին ավանդեցին, որ ազգերի և ժողովուրդների անկախությունը ձեռք է բերվում քաղաքական պայքարի միջոցով, ապա մեր ժողովրդի հերոսական անցյալն ոչ պակաս էական դեր է խաղացել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կայացման գործում:

Արցախն ու Սյունիքը, որոնց վրա միշտ էլ աչք են դրել անկուշտ հարևանները, Մայր Հայրենիքի հյուսիս-արևելյան կողմի ռազմավարական բանալիներն են հանդիսանում: Չպետք է մոռանալ գորավար Նժդեհի իմաստուն այն միտքը, որ «Հայաստանն ինչպիսի ցուցանակ կրելու լինի, չի կարող գոյություն ունենալ առանց Ղարաբաղի և Ջանգեզուրի»:

Պատմական անհերքելի ճշմարտություն է, որ Արցախ նահանգը զբաղեցրել է Կուրակ գետից մինչև Երասխ գետը՝ թիկունքին ունենալով Հայաստանի հետ սահմանային շրջանները, իսկ առջևում՝ Կուր-Արաքսյան հովիտը: Այդ նահանգի մի մասում, դեռևս X-XVI դարերում, ձևավորվել էր Խաչենի իշխանությունը, որի տերերի հետ գրագրություններ է ունեցել նույնիսկ բյուզանդական արքունիքը¹: Խաչենը, որի անունով է կոչվել ամբողջ Արցախ նահանգի հիմնական մասը X-XIII դարերում, Հայաստանի ամենաազդեցիկ վարչաքաղաքական միավորներից մեկն է եղել: 17-րդ դարի սկզբներին Խաչենի զավառների իշխանավորներն Իրանի շահ Աբաս 1-ինի հրովարտակներով ստացել են մելիքական տիտղոսներ և իրավունքներ: Մելիքները հայոց հին իշխանական տներից սերող ֆեոդալական կառավարիչներ են եղել, որոնց պարսից շահերը տվել են

¹ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 6. Եր., 1970, գիրք Բ., գլուխ 48: Բ.Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Եր., 1975, էջ 50:

արաբական «մելիք» հորջորջումը, որը նշանակում է «տեր», «իշխան»: Քանի որ գավառները հիմնականում հինգն էին՝ Դիզակ, Վարանդա, Խաչեն, Զրաբերդ և Գյուլիստան, ապա դրանք պատմության մեջ հայտնի են «խամսա» /արաբերեն նշանակում է հնգյակ/ անունով¹:

Վերոհիշյալ մելիքություններն ունեցել են պետականության հատուկ կարգավիճակ, իսկ դրանց կառավարիչները՝ մելիքները, ներքին կառավարման հարցերում՝ լիակատար ինքնուրույնություն: Նրանք ունեցել են իրենց բերդերը, սեփական զորքը, հարկային քաղաքականությունը, դատ ու դատաստանի իրավունքը: Մելիքների գլխավորը՝ Դիզակի մելիք Եգանն էր, որը Նադիր Շահի կողմից բեկլարբեկի տիտղոս էր ստացել և որի մոտ էլ հավաքվում էր արքունական հարկը²:

Ըստ Ռաֆֆու՝ Արցախի մելիքություններն որպես հայկական իշխանություն պահպանվել են 19-րդ դարը³:

Հայոց գավառական մելիքների իրավունքները վերջին անգամ վերահաստատվել են Նադիր Շահի հրովարտականերով: Նրանց մեջ նշվում էին մելիքների իրավունքները և պարտականությունները, մասնավորապես հրովարտակաները, օժտելով մելիքներին հարկ վերցնելու, զորք պահելու, կառավարելու և դատ անելու իրավունքներով, միաժամանակ նրանցից պահանջում էին հպատակների հանդեպ լինել արդար և ուղղամիտ, գործել այնպես, որ չլինի ոչ ամենափոքր ճնշում և ոչ էլ կողմնապահություն:

Քաղաքական անկախության կորստի պայմաններում հայ ժողովրդի ներքին կառավարման հարցերում միշտ էլ էական դեր է ունեցել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, և հայ հին նախարարական տոհմերի ու իշխանական տների ներկայացուցիչները և մելիքները: Իսկ ժողովրդի ներքին կառավարման գործառույթներից մեկն էլ իրականացվել է իրավունքի միջոցով, որի աղբյուրներն են հանդիսացել սովորույթը, կանոնական իրավունքը, օտար իրավունքի թարգմանչական հուշարձանները, ազգային դատաստանագրքերը և իրավահայտ աղբյուրները:

Հայ ժողովուրդն ազգային պետականությունը կորցնելուց հետո օտար գավթիչներին կուլ չգնալու համար առաջնահերթ նշանակություն է տվել սովորույթային իրավունքի նորմերին, որոնք դարեդար անցել են սերուն-

¹ ԹՅԿՇ, «ՈՂՇ ԱճՕՁԻՁՆ. 10, ԷՅՍԵՅՍՇ Ս՝ԷՇՍՁՁՍՁՁՅՅ՝ՈՂ, ԹՆ., 1964, չգ 161-163:

² ՍՁՍՅԻ՝ՁՁ, չգ 187, 191:

³ ՍՁՍՅԻ՝ՁՁ, չգ 564:

դից սերունդ և հասարակական կյանքում դարձել պարտադիր: Նույնիսկ հնուց եկող որոշ սովորույթներ պահպանվել են նաև մեր իրականության մեջ:

Պատմությունից մեզ շատ քիչ տեղեկություններ են հասել ինչպես խաչենի իշխանությունում, այնպես էլ Արցախի մելիքություններում իրականացված դատական իշխանության վերաբերյալ: Դեռ ավելին, այդ ժամանակներին վերաբերող որևէ դատական գործ կամ դատական որոշում մեզ գրավոր չի հասել: Սակայն բոլոր հետազոտողները միահամուռ են այն բանում, որ ինչպես խաչենի իշխանները, այնպես էլ Արցախի մելիքներն ունեցել են իրենց դատոն ու դատաստանը¹:

Հանրահայտ փաստ է, որ Մխիթար Գոշը, հայոց աշխարհիկ իրավունքի անդրանիկ ժողովածուն, իր հռչակավոր «Դատաստանագիրքը» գրել և ավարտել է 1184 թվականին Հաթերքում՝ Խաչենի մեծ իշխան Վախթանգի ապարանքում և վայելել նրա հովանավորությունը: Հայ իրավական մտքի հուշարձանի առաջին օրինակներից մեկը Մ.Գոշն ընծայագրով նվիրել է Արցախի իշխանաց իշխան Վախթանգին՝ ակնարկելով, որ իշխանն անսխալ ուղղությամբ կկիրառի նրա պատվիրանները: Դա մի ծանրակշիռ հանգամանք է և խոսում է այն բանի օգտին, որ Մ.Գոշի «Դատաստանագիրքը», որով հայկական արդարադատությունը ղեկավարվեց մինչև 16-րդ դարը, ամենայն հավանականությամբ օգտագործվել է նաև Խաչենի իշխանությունում²:

Դժվար է ասել, թե միջնադարյան հայ իրավական մտքի այդ ամենախոշոր հուշարձանից կարողացան օգտվել Արցախի մելիքություններում, սակայն հստակ է, որ մելիքները չէին ղեկավարվելու շարիաթի օրենքներով կամ իրեն ինքնակոչ Ղարաբաղի խան հռչակած Փանահի կարգադրություններով: Դա այն դեպքում, երբ Աստրախանի հայ գաղութում, որտեղ հայերի թիվը 18-րդ դարի կեսերին հասնում էր շուրջ 2000-ի, կիրառ-

Ղաֆֆի, էջ 164: ԹԿՏՅՏ, կարճօպ ՊՏՈՏՏՏՏՏՏ խՈՐՈՐՈՐՈՐ, ՉՈՒՆՈՐՉ-1902, էջ 2-4: Հ.Մուսայելյան, Ղարաբաղի նուաճման հարիրամեակը, «Արարատ» 1914-ՈՅԿԳ ՆԱ Ս.Էջմիածին էջ 150: Ֆ. Պողոսյան, Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, «ԲՀԱ»-1966 թիվ 1, էջ 199-200 :

²Մ. Գռլ, Ղատաստանագիրք հայոց, իրավաբանական հետազոտությունք ծանոթութամբք Վ.Բաստամեանց, Վաղարշապատ, 1880, էջ 104, 178, Բ.Ուլուբաբյան, Հայոց արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Երևան-1998, էջ 304-306, Ա.Մաղալյան, Արցախի մելիքությունները և մելիքական տները, Եր., 2007, էջ 35:

վում էր Աստրախանի հայոց «Դատաստանագիրքը», որի դրույթները մերժեցման շատ եզրեր ուներ Մ.Գոշի «Դատաստանագրքի» հետ¹:

Մ.Գոշի «Դատաստանագիրքը» սկզբունքորեն ընդունում է, որ քրեական գործերը քննելու, հանցագործությունների ու մեղքերի համար մարդկանց պատժելու իրավունքը հավասարապես պետք է պատկանի և՛ հոգևոր, և՛ աշխարհիկ դատարաններին²:

Պատմագիտական փաստերը ցույց են տալիս, որ դատավարությունը միջնադարյան Հայաստանում բոլորովին էլ հոգևոր դասի առանձնաշնորհը չի եղել, ավելին՝ եկեղեցական դատարանը զբաղվել է գերազանցապես եկեղեցու և հոգևորականության հետ կապված գործերով: Աշխարհիկ գործերի խիստ նեղ բնագավառն է ընդդատյա եղել նրան, սահմանափակված առավելապես ընտանիքի ու ամուսնության իրավունքով և քաղաքացիական իրավունքի մի մասով³:

Արցախի մելիքություններում աշխարհիկ դատարանների գործառույթները կատարել են մելիքները և տանուտերեր-քյոխվաները: Վերջիններս նշանակված կամ հաստատված լինելով մելիքների կողմից՝ հանդես էին գալիս որպես ստորադաս դատարաններ: Միջնադարյան Հայաստանում դրանք կոչվում էին տանուտիրական դատարաններ: Նրանց իրավասության մեջ էր մտնում գյուղական վեճերի և թեթև հանցանքների քննումը: Դատավարության ժամանակ հիմնականում ղեկավարվում էին սովորույթային իրավունքի նորմերով: Կողմը դժգոհ լինենով տանուտիրական դատարանի արձակած վճռից՝ կարող էր գանգատարկել այն «մելիքական դատարանին», որը հանդես էր գալի որպես վճռաբեկ ատյան տանուտիրական դատարանի նկատմամբ: Մելիքական դատարանն առաջին ատյանի կարգով քննում էր նաև ծանր հանցանքների վերաբերյալ գործերը: Դատավարության կարգը բանավոր էր և դատավարության ելքը հիմնականում կախված էր սովորույթային իրավունքի նորմերից և մելիքի կամքից, որը հպատակների համար օրենքի ուժ ուներ:

Մելիքի արձակած վճիռը վերջնական էր և բողոքարկման ենթակա չէր:

¹ «Դատաստանագիրք Աստրախանի հայոց» Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Եր., 1967:

² Մ.Գոշի Հայոց դատաստանագիրքը, Եր., 1954, նախադրություն, Ե. գլուխ, Ա.Թովմասյան, Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, Եր., 1977թ. էջ 8-9:

³ Խ.Թորոսյան, Դատարանային համակարգը միջնադարյան Հայաստանում ըստ Մ.Գոշի Դատաստանագրքի, «Տեղեկագիր հասարակական գիտությունների»-1965 թիվ 12, էջ 94:

Ղատավարության համար հատուկ շենք չի եղել, դատը տարվել է մե-
լիքի տան բակում կամ ապարանքի սենյակներից մեկում: Գանգատա-
վորն իր ցուցմունքները հաստատելու համար պարտավոր էր վկաներ
բերել, իսկ վկաներ չլինելու դեպքում՝ երդվել: Ղատաստանական
երդման համար եկեղեցում կամ մի սրբի առաջ գանգատավորը մի գույգ
մոմ էր վառում և մեղավորին առաջարկում հանգցնել մոմերը: Եթե փչեր-
հանգցներ՝ համարվում էր անմեղ: Երբեմն բարձրաստիճան մարդիկ էին
երդվում իրենց ստորադրյալների փոխարեն:

Նահապետական սովորույթներով ապրող արցախցու համար երդվելը
շատ ծանր է համարվել և երբեմն չերդվելու համար մարդիկ հանցանքը
հանձն են առել, իսկ սուտ երդվողներ շատ հազվադեպ են եղել:

Որոշ դեպքերում գանգատավորը մի վառ ածուխ էր տալիս հանցա-
վորին, և սա, ածուխի վրա ջուր լցնելով, ասում էր, - այսպես անցնեն, թե
որ արել եմ:

Տարածված են եղել հետևյալ պատիժները՝ ծեծը, տուգանքը, բան-
տարկությունը, անվանարկությունը, դամղա խփելը, ծիու պոչից կապելը
ու քարշ տալը և մահապատիժը:

Հանցագործների նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի էր առնվում
կատարված արարքի բնույթը և հասարակական վտանգավորության աս-
տիճանը:

Ամենասովորական և տարածված պատիժը ծեծն էր ու տուգանքը:
Ծեծը գործադրում էր մելիքը կամ նրա ծառաները: Հանցավորին ծեծում
էին ճիպոտներով՝ մերկացրած կամ ծառից կապած վիճակում: Շատ ան-
գամ էլ հանցավորին ծառից կապված վիճակում 2-3 օր պահում էին: Տու-
գանքը բռնագանձվում էր մելիքի օգտին: Միայն տուգանքից
Վարանդայի մելիք Շահնազար երկրորդը տարեկան ստանում էր մոտ
20.000 ռուբլի արծաթ¹: Որպես բանտ ծառայում էր մելիքի ախոռը կամ
ցախատունը, իսկ վտանգավոր հանցագործներին պահում էին
թաղակապ ներքնատներում կամ ստորգետնյա վիրապներում:
Անվանարկության պատժին հիմնականում ենթարկվում էին անառակ
կանայք, որոնց երեսին մուր կամ թրիք էին քսում, էշի վրա նստեցնում
և շրջեցնում էին գյուղում, իսկ անուղղելի անառակ կանանց կապում էին

¹ Լեո, *Երկերի ժողովածու* հ. 3. գիրք 2, Եր., 1973, էջ 23, նույնի՝ *Խոջայական կապիտալ*, Եր., 1934, էջ 168:

ծիու պոչից և քարշ տալիս: Պատժի այս ձևով մեկիք Հովսեփ Ա-ն սպանել է պոռնիկ Մարիամին:

Դամոկա խփելու պատժի էությունը կայանում էր նրանում, որ հանցավորին մերկացնում էին և մեկիքի կնիքը խփում նրա հետույքին: Բոլոր մեկիքները կնիքադրոշմ են ունեցել, որ ներկայացնում էր մի կեռ թուր, շուրջը գրված. Քսի ծառայ մեկիք...(այսինչ)¹:

Առավել ծանր հանցանքներ կատարած անձանց կուրացնում կամ կտրում էին ձեռքը կամ էլ դատապարտում էին մահապատժի, որն իրականացվում էր այրման, կախելու, խեղդամահ կամ սրախողխող անելու միջոցով:

Այդ հարցում չնայած խիստ և դաժան, բայց արդարադատ են եղել Դիզակի մեկիքները, մասնավորապես մեկիք Եսային և մեկիք Աբասը: Վերջինս ժողովրդի կողմից ստացել էր նաև Աբաս Դաժան մականունը: Հանցագործը չէր կարող ազատվել մեկիք Եսայու ձեռքից ո՛չ կաշառքով և ո՛չ էլ բարեխոսությամբ: Յուրաքանչյուրին ըստ կատարած հանցանքի նշանակվում էր պատիժ և կշտամբանք: Մեկիք Եսայու օրոք գավառում վերացված էին ոչ միայն գողությունը, պոռնկությունը և մարդասպանությունը, այլև՝ կանանց բարձրածայն վեճերն ու կռիվները: Մեկիք Աբասի կառավարման տարիներին հանցագործը սրախողխող էր արվում հենց հասարակության առջև, որպեսզի ոչ ոք չհամարձակվի հետագայում նույն հանցանքը գործել²:

Մահապարտների նկատմամբ ոչ պակաս խիստ են եղել նաև մյուս մեկիքները: Այսպես, մեկիք Բեգլարի կողմից մահապատժի դատապարտված հովիվ Հախվերդու գլխին դրել են շիկացրած փլավքամին, որն անմիջապես մահացել է, իսկ մեկիք Աբով Գ-ին չենթարկվելու համար Փանոսանց Հայրապետին ծառից կախել են:

Արցախից Հնդկաստան տեղափոխված Մովսես Բաղրամյանը, մեծահարուստ հնդկահայ Հակոբ Շամիրյանի տպարանում 1772թ. տպագրած իր «Նոր տետրակ, որ կոչվում է Հորդորակ» գրքի մեջ նշում է, որ Զրաբերդի մեկիք Ադամը և Գյուլիստանի մեկիք Հովսեփն առանց որևէ մեկի հրամանի կարող էին իրենց ենթակա ժողովրդի միջից հանցավորին կամ վնասապարտին ինքնակամ կերպով պատժել ու սպանել³:

¹ Ե.Լալայան, Երկեր, հ. 2, Եր., 1988թ. էջ 245-274, 252 :

² Առաքել Վարդապետ Կոստանյանց, Դիզակի մեկիքությունը, Վաղարշապատ, 1913, էջ 44-47, 73-74, Բաֆֆի էջ 274:

³ «Նոր տետրակ, որը կոչվում է Հորդորակ», Եր., 1991, էջ 102-103:

Սրանք ծանրակշիռ փաստեր են, որոնք ապացուցում են, որ նույնիսկ Ղարաբաղի խանության տարիներին յուրաքանչյուր մելիքությունում դատավարության իրավունքը գտնվում էր տվյալ գավառի մելիքի ձեռքում: Խաները միայն իրենց ազգին յուրահատուկ արևելյան խորամանկությամբ և խարդախությամբ կարողանում էին դավեր նյութել մելիքների գլխին: Նման քստմնելի դեպք է եղել, երբ Իբրահիմ խանը բարեկամական զրույց ունենալու նպատակով Շուշի հրավիրեց Ջրաբերդի մելիք Մեփումին, Գյուլիստանի մելիք Աբովին, Դիզակի մելիք Բախտամին և Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին ու նրանց բանտարկեց Շուշիի բերդում:

«Մելիքական իրավունքը» կազմված լինելով չգրված իրավական և բարոյական վարքագծի կանոններից, տարածվում էր նաև հենց մելիքների վրա: Որևէ մելիքի կողմից սովորույթային իրավունքի նորմերի կամ բարոյականության հիմնարար սկզբունքների խախտման դեպքում, մյուս մելիքները միավորվել են նրա դեմ և չգրված օրենքի խստությամբ պատժել նրան: Այդպես է եղել, երբ իշխանատենչ մելիք Շահնազարը Վարանդայի մելիքը դառնալու համար սպանել է եղբորը՝ մելիք Հովսեփին և կոտորել տվել նրա ամբողջ ընտանիքը ու անօրեն կերպով տիրացել մելիքությանը: Ոճրագործին պատժելու և մելիքության ժառանգման սահմանված կարգը վերականգնելու համար մյուս մելիքները պատժիչ արշավանք են ձեռնարկել մելիք Շահնազարի դեմ, սակայն այդ եղբայրասպան գժտություններից կարողացավ օգտվել միայն Արցախի ռխերիմ թշնամի Փանահ խանը: Մեկ այլ օրինակ, մելիքների կողմից ռուսների հետ վարած գաղտնի բանակցություններն Իբրահիմ խանին հայտնելու համար մելիքական տոհմի ներկայացուցիչ Ալլահ-Ղուլի բեկի նկատմամբ ամենայն խստությամբ կիրառվեց մելիքական օրենքը: Նա բռնվեց և գլխատվեց: Այդպես է եղել և կլինի՝ ազգային շահերի դավաճանությունը համարվել է ամենաքստմնելի հանցագործությունը և խստորեն պատժվել:

Թեկուզ մելիքները ներքին հարցերում եղել են միահեծան՝ ունենալով անսահմանափակ իրավունքներ, բայց նրանք հանդիսանալով Իրանի շահի վասսալներ՝ հարկահավաքության գործում ինքնագլուխ չէին կարող լինել: Պատմությունը վկայակոչում է, որ Վարանդայի Մելիք

Միոգաբեկը շահական գանձարանին հարկը չվճարելու համար ենթարկվել է մահապատժի՝ խեղդամահ անելու միջոցով:

Արցախի մելիքություններում դատական որոշումներն ի կատար էին ածվում տանուտերերի և մելիքների կողմից: Տանուտիրական դատարանի վճիռը կատարվում էր տվյալ գյուղի գզիրի, իսկ մելիքական դատարանինը՝ մելիքի ծառաներից մեկի կողմից: Վճիռն արձանագրված չէր հանձնվում ծառային, այլ միայն մի թղթի վրա խփված մելիքի կնիքը կամ նրա համրիչը: Վճռի էությունը բերանացի բացատրում էին ծառային, նա էլ՝ դատապարտվածին, և իբրև վկայակոչում իր ասածին՝ ցույց էր տալիս մելիքի կնիքը կամ համրիչը: Տանուտերը և մելիքը դատավարության համար վարձ չէին պահանջում, բայց ծառան պոկում էր ինչքան կարող է թե՛ մեկ և թե՛ մյուս կողմից:

Քաղաքացիա-իրավական հարաբերություններից բխող վեճերի քննությունը և լուծումը իրականացրել է Հայ Առաքելական եկեղեցու Գանձասարի հոգևոր իշխանությունը: Վերջինս լծորդված էր մելիքական իշխանության հետ՝ կազմելով մեկ միասնական քաղաքական միավոր: Երկու իշխանությունների միջև գործում էր հաղորդակից անոթների օրենքը: Երբ թուլանում էր մեկը, բնականաբար թուլանում էր և մյուսի դիրքերը:

Նման պայմաններում մելիքներն ակտիվ մասնակցություն են ունեցել նաև իրենց իշխանության ներքո գտնվող գավառի հոգևոր գործերին: Մելիքների թույլտվությամբ է տեղի ունեցել պսակը և ամուսնությունը:

Ամուսնանալու համար մելիքի հպատակները նրան վճարում էին որոշակի դրամական գումար: Նրանք պարտավոր էին տանել մելիքին մսացուի սուկին և երկկամները, 1 կուծ գինի, 2 հավ և 2 շիշ օղի: Եթե հարսն ուրիշ գյուղ էր տարվում, պարտավոր էին ավելի վճարել: Մելիքն իր հերթին նորապսակներին մի «խալաթ» /նվեր/ է տվել:

Իրենց հպատակների ամուսնալուծությունների հարցում մելիքները երբեմն թույլ են տվել կամայականություններ՝ հարկադրելով եկեղեցուն ամուսնալուծել իրենց հպատակներին և ամուսնացնել այլ անձանց հետ: Այսպես, երբ մելիք Հովսեփ Ա-ի հպատակ Մուսին գանգատվել է իր կնոջից, ապա մելիքի հրամանով եկեղեցին նրանց ամուսնությունը լուծել է և Մուսին ամուսնացել է մեկ այլ կնոջ հետ¹:

Ժառանգման իրավունքի հարցերը գտնվել են հոգևոր իշխանության ձեռքում: Պատմությունը մեզ թողել է Ամարասի Իսրայել կաթողիկոսի մի

¹ Ե.Լալայան, էջ 241

շատ հետաքրքիր գրավոր վկայություն, համաձայն որի Վարանդայի մելիք Շահնազար երկրորդը 1792 թվականին իր գույքը կտակել է կրտսեր որդուն՝ Ջհանբախշին: Գրությունը հետաքրքիր է ինչպես իրավական, այնպես էլ ժամանակի բարքերի տեսակետից:

Ինչպես հայտնի է, Վարանդայի մելիք Շահնազար երկրորդն ունեցել է 3 կին, որոնցից միայն առաջինը՝ Թագուհին է եղել օրինավոր: Եվ երբ Իբրահիմ Խանի հլու սպասավոր, Գանձասարին հակառու Իսրայել կաթողիկոսը գրավոր հաստատել է մահամերձ մելիք Շահնազարի կամքը՝ ամբողջ գույքն իր արտաամուսնական կապերից ծնված որդուն՝ Ջհանբախշին կտակելու մասին, ապա նրա օրինավոր կնոջից ծնված որդին՝ մեծիկ Ջուլմուղը, հետագայում կարողացել է մոլլա Հուսեյնի միջոցով Իսրայել կաթողիկոսի հաստատած կտակն անվավեր ճանաչել¹: Ավելորդ չէ նշել, որ կտակարարն ու կտակը հաստատողն այնքան վնաս են հասցրել Արցախի մելիքական և հոգևոր իշխանությունների ազգային ազատագրական պայքարին, որ նրանց կողմից Ղարաբաղի լեռնաստանին պատճառված վնասի հետևանքները վերացվեցին միայն մեր օրերում:

Ինչպես նշվեց, մելիքները, լինելով աշխարհիկ գործերի տեր, վճռական դեր են խաղացել նաև հոգևոր գործերում: Պատմական փաստ է, որ Պետրոս Խանցքեցին՝ Գանձասարի Գրիգոր կաթողիկոսի որդեգիրը և դրանով՝ նաև Հասան Ջալալյան տոհմի անդամ դառնալու հարցում վճռական դեր է խաղացել Խաչենի մելիք Աթաբեկ Հասան-Ջալալյանի համաձայնությունը²:

Ռուսական կայսրության առաջին տարիներին մելիքները և նրանց ժառանգները, թեև պաշտոնապես զրկվեցին նախկին մելիքական իրավունքներից, բայց ճանաչվեցին իբրև տոհմիկ ազնվականներ՝ բեկեր:

Այսպիսով, ժողովրդի մեջ այնքան խորն է եղել արմատավորված սովորույթային իրավունքը, նահապետական կացութաձևերը և համակրանքն երկրի նախկին հայ տերերի նկատմամբ, որ նույնիսկ Ղարաբաղը ցարական Ռուսաստանին միացնելուց հետո, թեպետ ոչ դատավոր, բայց որպես գյուղի ամենաազդեցիկ և հեղինակավոր մարդիկ, գյուղացիները տեղական վեճերը լուծելու համար դիմել են

¹ Լեո, հատոր 3, գիրք 2, էջ 376-377:

² Մ.Քարխուդարյան, Արցախի Բաքու-1895, էջ 54, Լ.Սկրտումյան, Գանձասարի կաթողիկոսությունը Պետրոս Խանցքեցի կաթողիկոսի օրոք, «ԼԳԻ» թիվ 1, էջ 90:

բեկերին: Մելիքների ժառանգներն ընդառաջել են համագյուղացիների խնդրանքին և «Դատ կտրել» կամ դատն իրենց ցանկացածի պես վճռելու համար ճնշում են գործադրել գյուղական պաշտոնյաների վրա: Վերջիններս չեն խոչընդոտել մելիքների ժառանգերի միջամտություններին և շոյված լինելու ակնկալիքով՝ իրենց բերանները քաղցրացրել են բեկերի տանը¹:

Резюме

Автор в своей статье анализирует роль и место судопроизводства в Меликствах Арцаха. Подчеркнув особый юридический статус этого княжества, автором детально анализируются как форма и процесс судопроизводства, а также виды наказания и условия их назначения.

Summary

In his article the author analyzes the role and the place of the proceedings in the principalities of Artsakh. Emphasizing the special legal status of this principality, the author examines in detail the shape and the process of proceedings, as well as penalties and conditions of their appointment.

**ՂԱՐԱՔԱՂԸ՝ ՈՌԻՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐՈՒՄ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ
1822-1867 ԹԹ.**

Նելլի Բաղդասարյան

Պատմական գիտությունների թեկնածու

Մեսրոպ Մաշտոց Համալսարան

¹ Ե.Լալայան, էջ 254-255: